ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՆԷՊ-Ի ԿԵՆՍԱԳՈՐԾՄԱՆ ՄԻ ՔԱՆԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Գ. Մ. ԳԵՂԱՄՅԱՆ

Հաղթանակած սոցիալիստական հեղափոխության և Հայաստանում սովետական կարգերի հաստատման շնորհիվ հայ ժողովուրդը ազատագրվեց ֆիզիկական բնաջնջման վտանգից, սոցիալական ու ազգային ճնշումից և բռնեց վերածնման ուղին։ Սովետական մյուս ժողովուրդների հետ մեկտեղ նա ակտիվորեն մասնակցում է մեր երկրում նոր հասարակարգի կառուցմանը։

Սոցիալիստական հասարակության կառուցման ընդհանուր օրինաչափությունները, որոնք հանճարեղ կերպով քննարկել և հիմնավորել էր Վ. Ի. Լենինը, ազգային հանրապետություններում կենսագործվում էին, հաշվի առնելով նրանց, ինչպես բնապատմական, այնպես էլ սոցիալական զարգացման առանձնահատկությունները։ Դրանով է պայմանավորվում անցման շրջանի բազմազանությունն ու բազմապիսությունը, որը միանգամայն բնական և օրինաչափ երևույթ է։ Ավելին, եթե ճիշտ չեն հաշվի առնվում տվյալ ժողովրդի սոցիալ-հոգեբանական և բնակլիմայական առանձնահատուկ պայմանները, ամենախելացի միջոցառումն անգամ վեր է ածվում գորշ շաբլոնի և կորցնում իր բուն էությունը։ Այդ էր պատճառը, որ Վ. Ի. Լենինը անընդհատ զգուշացնում էր տեղերի կոմունիստներին, ռուսական փորձն օգտագործել ստեղծագործաբար, ելնելով տեղական կոնկրետ պայմաններից։ Դեռևս 1921 թ. մարտի 2-ին Ս. Օրջոնիկիձեին գրած նամակում Վ. Ի. Լենինը պահանջում էր. «...Ոչ թե ռուսական շաբլոնը կիրառել, այլ հմտորեն և ճկունորեն ստեղծել յուրօրինակ մի տակտիկա, որը հիմնված լինի մեծ զիջողականության վրա ամեն տեսակի մանր բուրժուական տարրերի հանդեպ»[1]։ Կովկասի կոմունիստների համար հատկապես շատ արժեքավոր էր Վ. Ի. Լենինի 1921 թ. ապրիլի 14-ի նամակը, որով խորհուրդ էր տրվում բոլոր միջոցառումները կենսագործելիս ավելի հանգամանորեն հաշվի առնել տեղական առանձնահատկությունները, մեխանիկորեն չկրկնել այն, ինչ արվում է կենտրոնում։ Նա պահանջում էր, որ «...Անդրկովկասի կոմունիստները հասկանան իրենց դրության, իրենց հանրապետությունների դրության յուրօրինակությունը, ի տարբերություն ՌՍՖՍՀ դրության ու պայմանների, հասկանան մեր տակտիկան նույնությամբ չընդօրինակելու, այլ մտածված կերպով կոնկրետ պայմանների տարբերության համապատասխան այն ձևափոխելու անհրաժեշտությունը»[2]։

Հոկտեմբերյան հեղափոխությունը, Վ. Ի. Լենինի ստեղծած կոմունիստական կուսակցության գլխավորությամբ, երկրում հաստատելով պրոլետարիատի դիկտատուրան, հիմք դրեց մեր երկրում սոցիալիստական հասարակարգի կառուցման դարաշրջանին։ Կապիտալիզմից սոցիալիզմին անցման շրջանում

---

1 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 32, էջ 189—190։

2 Նույն տեղում, էջ 402։

Հայաստանում նէպի կենսագործման վրա այս կամ այն չափով ազդել են տընտեսության հետամնացությունն ու քայքայվածությունը, սակավահողությունը, գաղթականության զանգվածային կենտրոնացումը, բնակլիմայական խայտաբղետ պայմանները, կադրերի, միջոցների ամենուր զգացվող կարիքը և այլն։ Կային նաև այլ հանգամանքներ։

Հայաստանում, ինչպես հայտնի է, մի շարք պատճառներով սովետական իշխանությունը մոտ երեք տարի ուշ հաստատվեց։ Դա շատ կարևոր հանգամանք է, որը չի կարելի հաշվի չառնել տեղական առանձնահատկությունների մասին խոսելիս։ Թևակոխելով սոցիալիստական շինարարության ուղին, Հայաստանի նորաստեղծ հանրապետությունը չէր կարող անտեսել ծանր փորձությունների գնով ձեռք բերած ՌՍՖՍՀ-ի հարուստ փորձը՝ ինչպես նոր կարգերի հաստատման, այնպես էլ նոր հասարակարգի կառուցման գործում։ Հասկանալի է, որ դա զգալի չափով հեշտացնում էր մեր հանրապետությունում հնի կործանման և նորի կառուցման աշխատանքը։

Ինչպես հայտնի է, Ռուսաստանում սովետական կարգերի հաստատումից հետո, երկրում իշխանությունն անցավ սովետների ձեռքը, որոնք ընտրովի մարմիններ լինելով՝ աշխատավորական լայն մասսաներին հեշտությամբ էին ներքաշում պետական կառավարման գործի մեջ, նոր թափ հաղորդելով նրանց հասարակական և տնտեսական գործունեությանը։ Սովետների միջոցով ժողովուրդն իշխանությունը վերցրեց իր ձեռքը և սկսեց կենսագործել կուսակցության նախագծումները։ Սովետներին մեծ չափով օգնեցին 1918 թ. կազմակերպված չքավորական կոմիտեները, որոնք, փաստորեն, պրոլետարիատի դիկտատուրայի հենակետեր էին և նպաստեցին հեղափոխությունը գյուղում խորացնելու գործին։

Մինչդեռ Հայաստանում սովետական կարգերի հաստատման պահին սովետներ չկային։ Սովետական կարգեր հաստատվելուց հետո իշխանությունն անցավ տեղական հեղկոմներին, որոնք Հայաստանի հեղկոմի գլխավորությամբ իրականացնում էին պրոլետարիատի դիկտատուրան։ Ավելի քան մեկ տարի գոյատևած Հայաստանի հեղկոմի դեկրետներով հանրապետությունում հաստատվեցին իշխանության տեղական մարմիններ, ազգայնացվեց հողը, արտադրության հիմնական միջոցները, ձեռնարկվեցին տնտեսական կյանքի նորմալացման մի շարք միջոցառումներ։

Հեղկոմները նշանակովի մարմիններ էին, որոնք շատ մեծ դեր խաղացին ինչպես պրոլետարիատի դիկտատուրայի ամրապնդման, պետական հին մեքենայի ջախջախման, այնպես էլ իշխանությունը սովետներին անցնելու նախապատրաստման գործում։ Հայաստանում այդ շրջանում չկազմակերպվեցին չքավորական կոմիտեներ, որովհետև համատարած աղքատության ու ավերի պայմաններում դրանք գործունեության ասպարեզ գրեթե չունեին։ Սա կարևոր նշանակություն ունի այդ ժամանակաշրջանի հայկական գյուղի հասարակական հարաբերությունների զարգացումն ուսումնասիրելու տեսակետից։ Փաստորեն դասակարգային շերտավորումն ու հակամարտությունն այդ ժամանակ հայկական գյուղում չունեին այն սրությունը, ինչպես, օրինակ, Ռուսաստանում։ Հայաստանն ավելի գյուղացիական, ավելի քայքայված, ավելի հետամնաց երկիր էր։ Դա իր կնիքն էր դնում սովետական իշխանության, հատկապես առաջին տարիների, ձեռնարկած միջոցառումների վրա։ Վ. Ի. Լենինը Կովկասի կոմունիստներին ուղղած իր հայտնի նամակում հատուկ ընդգծում էր այդ հան-

դամանքը, որից և ոխում էր ավելի զգույշ, ավելի շատ զիջումներ կատարելու նրա պահանջը։ «Ավելի դանդաղ, ավելի զգույշ, ավելի սիստեմատիկ անցում դեպի սոցիալիզմ,— ահա թե ինչն է հնարավոր ու անհրաժեշտ Կովկասի հանրապետությունների համար՝ ի տարբերություն ՌՍՖՍՀ-ի։ Ահա թե ինչն է հարկավոր հասկանալ ու կարողանալ իրականացնել, ի տարբերություն մեր տակտիկայի»[3]։

Ի տարբերություն մյուս հանրապետությունների, Հայաստանը սովետական կարգերի հաստատման նախօրյակին տնտեսական ավելի ծանր վիճակում էր։ Առաջին հեմաշխարհային պատերազմի, Թուրքիայի կողմից կենսագործված ցեղասպանության ու մի քանի արշավանքների, դաշնակցության երկու և կես ամյա տիրապետության հետևանքով Հայաստանի տնտեսական կյանքը գրեթե լիովին ավերվել էր։ Դադարել էին գործելուց Ալավերդու և Ղափանի պղնձահանքերն ու գործարանները, մասամբ էին գործում գինու-կոնյակի, բամբակի և կաշվի մշակման մի քանի մանր ձեռնարկություններ։ Արդյունաբերության արտադրանքը նախապատերազմյան խղճուկ մակարդակի համեմատությամբ նվազել էր շուրջ 12 անգամ[4]։ Ամբողջովին ավերվել էր ու կողոպտվել Երկաթուղին։ Սովի վտանգից հարկադրված՝ կադրային բանվորները ցրվել էին գյուղերը, և փաստորեն ապադասակարգայնացման պրոցես էր տեղի ունենում։ Քայքայվել էր գյուղատնտեսությունը։ Կրճատվել էին ցանքատարածությունները ու անասունների գլխաքանակը։ Նախապատերազմյանի համեմատությամբ գյուղատնտեսության արտադրանքը նվազել էր շուրջ 6 անգամ[5]։

Գաղթականությունը, սովն ու համաճարակային հիվանդությունները կատարյալ անկման էին հասցրել երկիրը։ Այդ պայմաններում միայն սեփական ուժերով հնարավոր չէր վերականգնել ավերված տնտեսությունը։ Ինչպես սովետական կարգերի հաստատման, այնպես էլ երկրի տնտեսական ու կուլտուրական վերականգնման գործում վճռական նշանակություն ունեցավ մյուս հանրապետությունների և առաջին հերթին ռուս ժողովրդի եղբայրական օգնությունը։ Չնայած նյութական սուղ պայմաններին, Ռուսաստանից ֆինանսական և նյութական հսկայական օժանդակություն ստացվեց։ Մինչև 1922 թ. սկիզբը Ռուսաստանից որպես դրամական օգնություն ստացվել էր 3,5 միլիոն ռուբլի ոսկով և 2895 հազար փութ կենսամթերք ու ապրանքներ[6]։ Անշուշտ, դա օգնության նոր ձև էր, որը բխում էր սովետական հանրապետությունների եղբայրական փոխհարաբերություններից։ Երբ դրված էր մի ժողովրդի ֆիզիկական գոյության հարցը, ռուս ժողովրդի առանց այդ էլ բավականին սուղ միջոցներից կատարված մասհանումը վիթխարի նշանակություն ուներ հայ ժողովրդի ոչ միայն ֆիզիկական գոյատևման, այլև սոցիալական կողմնորոշման խնդրում։

Հաստատելով իր դիկտատուրան և վերցնելով քաղաքական իշխանությունը՝ պրոլետարիատը բոլոր միջոցները ձեռք է առնում երկրի տնտեսական զարգացումը իրեն ցանկալի հունի մեջ դնելու համար։ Սեփականազրկելով շահագործողներին, նա իր վրա է վերցնում նաև տնտեսության կազմակերպման

---

3 Նույն տեղում, էջ 404։

4 «Социалистическое строительство Арм. ССР 1920—1940», Ереван, 1940, стр. 23.

5 Նույն տեղում, էջ 47։

6 «Հայ ժողովրդի պատմություն», հ. 7, Երևան, 1967, էջ 102։

աշխատանքները։ Այս խնդրում ևս Հայաստանի նորաստեղծ հանրապետության համար ուղեցույց էր Ռուսաստանի կիրառած քաղաքականությունը։

Հայաստանում սովետական կարգեր հաստատվելու ժամանակ Ռուսաստանում կիրառվում էր ռազմական կոմունիզմի քաղաքականություն։ Դա պայմանավորված էր երկրի տնտեսական ծանր վիճակով, երբ սովետական իշխանությունը հարկադրված էր միջոցներ հայթայթելու նպատակով դիմելու արտակարգ միջոցառումների՝ ոչ միայն խոշոր, այլև մանր արտադրողների նկատմամբ։ «Ռազմական կոմունիզմ» մտցվեց,—գրել է Վ. Ի. Լենինը,—պատերազմից ու քայքայումից հարկադրված։ Նա պրոլետարիատի տնտեսական խնդիրներին համապատասխանող քաղաքականություն չէր և չէր էլ կարող լինել»[7]։ Քաղաքացիական կռիվներից հետո ՌԿ(բ)Կ X համագումարը (1921 թ. մարտ) վերացրեց ռազմական կոմունիզմի քաղաքականությունը։ Հայաստանի հեղկոմը ռազմական կոմունիզմի քաղաքականությունը մտցրեց 1920 թ. դեկտեմբերին, ջանալով որոշ չափով մեղմացնել հանրապետության պարենային ծանր վիճակը։ Սակայն ավերված ու կողոպտված, գաղթականներով ու որբերով հեղեղված երկրում ռազմական կոմունիզմը չտվեց այն արդյունքները, ինչ սպասվում էր, և իր հերթին բացասաբար անդրադարձավ գյուղացիության վրա, մանավանդ որ, կենսագործման պրոցեսում թույլ տրվեցին սխալներ ու թերություններ, որոնք ճարպկորեն օգտագործվում էին դասակարգային թշնամու կողմից։ Ինչպես նշված է «ՍՄԿԿ պատմության» մեջ, ՀԿԿ ղեկավարության մեծամասնությունը փորձում էր «Հայաստանում մեխանիկորեն օգտագործել ռազմական կոմունիզմի քաղաքականության մեթոդները, որն այդ ժամանակ Սովետական Ռուսաստանում արդեն սպառել էր իրեն։

Աղավաղումները, որոնք արտահայտվեցին չարգարացված ռեկվիզիցիաների և բռնագրավումների միջոցով, պետական ապարատի չկարգավորված լինելու և քաղաքական-բացատրական աշխատանքի թուլության պայմաններում, առաջացրին քաղաքի և գյուղի մանր բուրժուազիայի ղժգոհությունը»[8]։

Ռազմական կոմունիզմի քաղաքականության մեթոդները Հայաստանում մեխանիկորեն օգտագործելը պայմանավորված էր նաև այլ հանգամանքներով։ Դրանցից մեկն այն էր, որ ՌԿ(բ)Կ Կենտկոմի 1920 թ. դեկտեմբերի որոշմամբ Հայաստանում աշխատելու համար մոբիլիզացված կադրերի մեծ մասը, հատկապես սկզբնական շրջանում, լավատեղյակ չէր հանրապետության տնտեսական կյանքին, այն անտանելի ծանր պայմաններին, որոնք առաջ էին քաշել՝ ամեն գնով ֆիզիկական գոյությունը պահպանելու օրհասական պահանջը, հետին պլան թողնելով մյուս բոլոր, թերևս ոչ պակաս կարևոր խնդիրները։

Քաղաքացիական կռիվները հաղթականորեն ավարտելուց հետո, ելնելով մեր երկրում խաղաղ շինարարություն ծավալելու խնդիրներից, կուսակցության X համագումարը պարենմասնատումը փոխարինեց պարենհարկով, որով անցում կատարվեց նոր տնտեսական քաղաքականությանը։ Շուրջ մեկ տարվա ընթացքում կուսակցությունը հետևողականորեն նպաստ էր մտցնում կյանքի բոլոր բնագավառները և նրանից բխող վերակառուցումներ կատարում։ Անշուշտ նպաստ վճռական դեր խաղաց մեր երկրի ավերված տնտեսությունը

---

[7] Վ. Ի. Լենին. Երկեր, հ. 32, էջ 437.

[8] «История КПСС», т. III. кн. III, М., 1968. стр. 530.

վերականգնելու և սոցիալիստական հասարակարգ կառուցելու գործում։ Դա մեր երկրում սոցիալիստական հասարակարգ կառուցելու հանձարեղ ծրագիր էր, որը մշակել էր Վ. Ի. Լենինը։ Նոր տնտեսական քաղաքականությունը անփոխարինելի դեր խաղաց ավերված ու քայքայված ազգային ծայրամասերի տնտեսական վերելքն ապահովելու գործում, մանավանդ որ ելնելով լենինյան ցուցումներից, այն մտցված էր հաշվի առնելով կոնկրետ պայմաններն ու տեղական առանձնահատկությունները։

Ինչպես հայտնի է, Հայաստանում պարենհարկ մտցնելու դեկրետը հրապարակվեց Միության մեջ ՆԷՊ-ին անցնելուց բավականին ուշ, 1921 թ. հուլիսի 24-ին։ Դա թյուրիմացության մեջ է գցել որոշ ուսումնասիրողների, որոնք ռազմական կոմունիզմի քաղաքականությունը հասցնում են մինչև ամառը, մոռացության տալով, որ Հայաստանի հեղկոմի 1921 թ. ապրիլի 10-ի և 16-ի դեկրետներով արգելվեցին ամեն տեսակի խուզարկություններն ու բռնագրավումները։ 1921 թ. ապրիլի 10-ի դեկրետով Հայաստանի հեղկոմը պարտավորվելով «...ամեն տեսակ դյուրություն և աջակցություն ցույց տալ բոլոր երկրագործներին և երկրագործությամբ պարապել ցանկացողներին...» որոշեց.

«1. Ցանելիք սերմացուն ազատ է որևէ բռնագրավումից

2. Ցանքսերից ստացվելիք բերքը ամբողջովին պատկանում է ցանողին և նույնպես չի կարող ենթարկվել բռնագրավման»[9]։

Սա ռազմական կոմունիզմի քաղաքականությունից հրաժարվելու առաջին քայլն էր։ 1921 թ. ապրիլի 16-ին լույս տեսավ Հայաստանի պարենային ժողկոմի «Պարենային բռնագրավումների վերացման մասին» հրամանը, որտեղ ասված էր. «Այսօրվանից վերացվում են ամեն տեսակի պարենի բռնագրավում, նույնպես և կայուն գները շուկայում։ Բոլոր գնումները կատարել ազատ գներով»[10]։ Փաստորեն, 1921 թ. գարնանացանը հաջողությամբ կատարելու նպատակով հեղկոմը, հաշվի առնելով, որ գյուղացիությունը դժգոհ է ռազմական կոմունիզմի քաղաքականությունից, այն վերացրեց և մինչև ամառը հարկային նոր քաղաքականություն չմտցրեց։ Երբ արդեն հասունանում էր 1921 թ. բերքը և հաղթականորեն ավարտվել էին քաղաքացիական կռիվները, ընդունվեց պարենհարկի մասին հայտնի դեկրետը[11]։

Ինչ խոսք, Հայաստանում ՆԷՊ մտցնելիս հաշվի էր առնվում ինչպես երկրի քայքայվածությունը, այնպես էլ սակավահողությունն ու հետամնացությունը։ Պատահական չէ, որ ՌՍՖՍՀ-ում ՆԷՊ մտցնելուց անմիջապես հետո Վ. Ի. Լենինը գրեց Կովկասի կոմունիստներին ուղղված հայտնի նամակը (ապրիլի 14-ի), որի մեջ զարգացնում էր ինչպես տեղական պայմանները միշտ հաշվի առնելու, այնպես էլ տնտեսությունը վերականգնելու համար առավել առաջնահերթ ճյուղերի զարգացման անհրաժեշտությունը։ «Ավելի մեղմություն, զգուշություն, զիջողականություն մանր բուրժուազիայի, ինտելիգենցիայի և մանավանդ գյուղացիության նկատմամբ»[12],— գրում էր նա։ «Իսկույն աշխատել բարելավել գյուղացիների դրությունը,— շարունակվում է նամակում,— և սկսել էլեկտրիֆիկացիայի, ոռոգման խոշոր աշխատանքներ»[13]։

---

9 «ՀՍԽՀ դեկրետների և հրամանների ժողովածու», էջմիածին, 1921, պր. 2, էջ 12—13։

10 Նույն տեղում, էջ 17։

11 Նույն տեղում, էջ 61—62։

12 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 32, էջ 403։

13 Նույն տեղում, էջ 404։

Վ. Ի. Լենինը հատուկ ընդգծում էր ապրանքափոխանակության և առևտրի ծավալման անհրաժեշտությունը, ինչպես երկրի ներսում, այնպես էլ կապիտալիստական արտասահմանի հետ և պահանջում էր «ժլատություն չանել» այդ խնդրում։ Դա բխում էր նոր տնտեսական քաղաքականությունից։ Հայաստանում արտաքին առևտրին զարկ տալը հիմնականում պայմանավորված էր պարսկական շուկայի օգտագործման հետ, որը շատ կարևոր նշանակություն ուներ սովատանջ Հայաստանի համար։ Ինչ վերաբերում է ներքին ապրանքափոխանակության զարգացմանը, ապա նէպի առաջին տարիներին այն Հայաստանում չծավալվեց այն պարզ պատճառով, որ արդյունաբերական ապրանքները հիմնականում ստացվում էին դրսից։ Իսկ դա անընդհատ պրոցես չէր, ինչպես արտադրությունը, և շատ շուտով կամպանիոն բնույթ ստացավ՝ իր տեղը զիջելով առևտրին և լույս աշխարհ բերելով բազմաթիվ միջնորդների և առևտրականների։ Հայաստանի նէպմանը և նրան միացած կուլակները ավելի դաժան կերպով էին շահագործում աշխատավորությանը, օգտագործելով ծանր պայմաններն ու արդյունաբերական ապրանքների սղությունը։ Դա իր կնիքն էր դնում տնտեսության զարգացման և հատկապես դասակարգային շերտավորման վրա։

Հայաստանում նէպի կենսագործման առանձնահատուկ կողմերից էր այն, որ նէպը իրականացվում էր սակավահողության պայմաններում, որը լուրջ դժվարություններ էր հարուցում։ Հանրապետության տարածքը կազմում է մոտ 30 հազար կմ², որի միջին բարձրությունը 1800 մ է, իսկ 90%-ը գտնվում է ծովի մակերևույթից 1000 մ ավելի բարձրության վրա[14]։ Այդ տարածքի զգալի մասը գյուղատնտեսության համար պիտանի չէ։ Բավականին բարդ և բազմազան ռելիեֆն ու կլիման բնական գոտիների յուրահատուկ սանդուղք են ստեղծել, որով և պայմանավորված են տվյալ գոտու տնտեսական զարգացման հնարավորություններն ու հեռանկարները։ Հաճախ միևնույն շրջանի իրարամերժ գոտիները թելադրում էին ինչպես արտադրության կազմակերպման, այնպես էլ կենցաղի ու կենսապայմանների բազմազանություն, որոնք հնարավոր չէր անտեսել։ Սրան պետք է ավելացնել նաև հարցի սոցիալական կողմը՝ խոշոր կալվածատիրական հողատիրության բացակայությունը, հողատիրություն, որի վերացմամբ սովետական իշխանությունը մեկ հարվածով, հեղափոխական ուղիով կլուծեր գյուղացիությանը հողով բավարարելու հարցը։ Չպետք է աչքաթող անել նաև այն, որ կուսակցության ագրարային ծրագիրը հանրապետությունում կենսագործվում էր մեծ դժվարությամբ՝ հիմնականում կապված հողաշինարարական աշխատանքների հետ, իսկ դրանք իրենց հերթին պահանջում էին նշանակալի թվով կադրեր ու միջոցներ, որոնց պակասն ամենուր զգացվում էր։ Ուստի, պատահական չէր, որ հողաշինարարական աշխատանքները բավական ձգձգվեցին։ Դա հաճախ օգտագործում էր դասակարգային թշնամին։ Սակավահողության վերացման և գաղթականությանը հողով բավարարելու նպատակով հիմնականում հատուկ ուշադրություն էր դրվում ջրանցքաշինարարության վրա։ Կովկասի կոմունիստներին գրած նամակում Վ. Ի. Լենինն ընդգծում էր. «Ոռոգումը հատկապես կարևոր է հողագործությունն ու անասնապահությունը ինչ գնով էլ լինի բարձրացնելու համար»[15]։ Հայաս-

---

[14] «Армения», М., 1966. стр. 21.

[15] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 32, էջ 404։

տանի համար ոռոդումը միաժամանակ նոր հողերի յուրացման, հազարավոր մարդկանց հողամաս հատկացնելու միջոց էր և փաստորեն կուսակցության ագրարային քաղաքականության կենսագործման կարևոր պայմաններից մեկը։ Սակավահողությունն ու գաղթականության առկայությունը սովետական իշխանությանը հարկադրում էին ավելի շատ միջոցներ հատկացնել ջրանցքաշինարարության աշխատանքներին, որը հիմք հանդիսացավ հետագայում գյուղատնտեսության ինտենսիվ զարգացման համար։

Խոսելով պրոլետարիատի դիկտատուրայի տնտեսական քաղաքականության մասին, Վ. Ի. Լենինը նշում էր Ռուսաստանում գոյություն ունեցող այն հիմնական կացութաձևերը, որոնց փոփոխությունները հիմք են հանդիսանում երկրում սոցիալական ու դասակարգային տեղաշարժերի համար։ Հայաստանում, ինչպես հայտնի է, գոյություն ունեին նահապետական (թուլլ), մանր ապրանքային, մասնավոր տնտեսական կապիտալիզմ և նոր-նոր ձևավորվող սոցիալիստական կացութաձևերը։ Չնայած կատարված որոշ փորձերին, պետական կապիտալիզմը մեզ մոտ չարմատավորվեց (այն բավականին թուլլ էր նաև հարևան հանրապետություններում)։ Ուստի հիմնական դասակարգերը, որոնք վճռական դեր կարող էին խաղալ տնտեսական շինարարության բնագավառում՝ գյուղացիությունն էր իր մանր-տնտեսական արտադրությամբ, որը բացարձակ մեծամասնություն լինելուց բացի, տնտեսական բավականին ծանր վիճակի մեջ էր և, փաստորեն, նոր ձևավորվող բանվոր դասակարգը, որը չնայած իր փոքրաքանակ լինելուն՝ հենվում էր համաժողովրդական սեփականության վրա՝ հանդես բերելով զարգացման մեծ տենդենց։ Այստեղից էլ գյուղացիության նկատմամբ այն առանձնահատուկ և զգույշ քաղաքականության անհրաժեշտությունը, որը բազմիցս ընդգծում էր Վ. Ի. Լենինը։ Բացի դրանից, նէպի առաջին տարիներին գյուղատնտեսությունը մեր հանրապետության տնտեսության առաջատար ճյուղն էր, որի վերականգնումից շատ բանով էր կախված սոցիալիզմի կառուցման ճակատագիրը։ Անհրաժեշտ էր ամեն կերպ շահագրգռել մենատնտես գյուղացուն, իր արտադրության բարձրացմամբ և, բազմապատկելով նյութական բարիքների արտադրությունը, նպաստել սոցիալիստական շինարարությանը։ Դա էր նէպի հիմնական խնդիրներից մեկը։ Երկրի ավելի գյուղացիական լինելը իր հետքն էր թողնում սովետական իշխանության բոլոր միջոցառումների կենսագործման և ընդհանրապես ամբողջ անցման շրջանի վրա։

Բացի դրանից, երկրի ծանր վիճակը և մանավանդ գաղթականության առկայությունն ու համատարած սովը նորաստեղծ սովետական իշխանության առջև ամբողջ ծանրությամբ դրել էին բնակչության ֆիզիկական գոյությունը պահպանելու խնդիրը, որը առաջնահերթ նշանակություն ուներ մյուս բոլոր հարցերի նկատմամբ։ Ուստի, Հայաստանի կառավարությունը բոլոր միջոցներն ուղղում էր ինչպես ներքին ռեսուրսները հավաքելու, կուտակելու, այնպես էլ ստացվող օգնությունը տեղ հասցնելու և առաջին հերթին ամենակարիքավորներին բաժանելու վրա։ Մանավանդ որ ներքին միջոցները բավականին սուղ էին և դրսից ստացվող եղբայրական օգնությունը բավականին վճռական նշանակություն ուներ։ Դա սոսկ օգնություն չէր, այլ փրկության միջոց, որը ժամանակին հասցվեց հայ ժողովրդին։

Հայտնի է, որ նէպի կենսագործմամբ գյուղում սրվեց դասակարգային շերտավորումը, և կուսակցությունը վճռական միջոցառումների էր դիմում մի կողմից աշխատավոր գյուղացիության հետ դաշինքն ամրապնդելու, մյուս կողմից՝ շահագործողական տարրերին մեկուսացնելու և նրանց զարգացման տենդենցները սահմանափակելու ուղղությամբ։ Հայաստանում գյուղացիության շերտավորումը նէպի առաջին էտապում բավականին դանդաղ էր ընթանում։ Չնայած 1920-ական թվականների վերջերին միջակ գյուղացիության տեսակարար կշիռը բավականին բարձրացել էր, այնուամենայնիվ (ի տարբերություն մյուս հանրապետությունների) դեռևս շատ մեծ էր չքավորների ու բատրակների քանակը[16]։ Դա պայմանավորված էր սակավահողությամբ և արդյունաբերության թույլ զարգացմամբ։ Բնականաբար, այս պայմանները թելադրում էին կոոպերացիայի լայն արմատավորում, որը պետք է մի կողմից աշխատավոր գյուղացիությանը փրկեր կուլակային շահագործումից, մյուս կողմից օգներ, նպաստեր նրա տնտեսական ամրապնդմանն ու նրան կողմնորոշեր դեպի սոցիալիզմ։ Ի դեպ, Հայաստանում կոոպերացիայի անհրաժեշտությունը շատ էր զգացվում, քանի որ կուլակային շահագործման մեջ գնալով ավելի մեծ տեղ էր գրավում վաշխառությունը։

Սակայն կոոպերացիան մեզ մոտ ուշ սկսվեց (1924) և բավականին թույլ էր արմատավորվում։ Դա ուներ իր՝ օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառները։ Հայաստանում գյուղացին չէր անցել կոոպերացիայի այնպիսի դպրոց, ինչպես օրինակ, Ռուսաստանում։ Սա շատ կարևոր հանգամանք էր, որը դժբախտաբար միշտ չէ, որ հաշվի էր առնվում։ Համատարած կոլեկտիվացման ժամանակ անտեսվեցին նաև հանրապետության բազմազան բնակլիմայական պայմանները, որոնք տարբեր մոտեցում էին պահանջում։ Վերջապես, չպետք է մոռանալ, որ հանրապետության գյուղատնտեսության տեխնիկական բազան անհամեմատ ավելի թույլ էր, քան Ռուսաստանում։ Նշված առանձնահատկությունների անտեսումը բավական դժվարություններ առաջացրեց գյուղի սոցիալիստական վերակառուցման ժամանակ, երբ ավարտելով ուժերի վերախմբավորումը, կուսակցությունը դասակարգային թշնամու դեմ ամբողջ ճակատով հարձակման կուրս վերցրեց։ Այնպես որ՝ ինչպես կոլեկտիվացման եռուն պրոցեսում, այնպես էլ նրանից հետո, հանրապետության գյուղատնտեսական արտադրության վայրէջքը հիմնականում տեղական առանձնահատկությունները ճիշտ հաշվի չառնելու արդյունք էր, որից և բխում էր թույլ տրված սխալների ու թերությունների մեծ մասը։

Լինելով ագրարային հետամնաց երկիր և հիմնական ուշադրությունը կենտրոնացնելով գյուղատնտեսության վերականգնման վրա, Հայաստանում արդյունաբերությունը համեմատաբար ուշ սկսեց կենդանության նշաններ ցույց տալ։ Նախ, անհրաժեշտ է նշել, որ նախասովետական Հայաստանում արդյունաբերությունը շատ թույլ էր զարգացած (Ալավերդի, Ղափան և սննդարդյունաբերության մի քանի ձեռնարկություններ) և հիմնականում ավերվել ու կողոպտվել էր դաշնակների տիրապետության ժամանակաշրջանում։ Նէպի առաջին էտապում հիմնական միջոցները ներդրվում էին ոչ այնքան վերականգնման, որքան արդյունաբերական նոր ձեռնարկությունների կառուցման համար։ Հատկապես առաջնահերթ նշանակություն էր տրվում սննդի ու թեթև

16 ՄԼԻ Հայկական մասնաճյուղի արխիվ. ֆ. 1, ց. 13, գ. 7, թ. 12։

արդյունաբերության ձեռնարկությունների կառուցմանը, որովհետև ազգային հանրապետությունների ինդուստրիալ բազան ստեղծվում էր միության մասշտաբով և բոլորի մասնակցությամբ։ Մյուս կողմից, այդ ճյուղերի զարգացումը համեմատաբար հեշտ և արագ էր տեղի ունենում։ Այն խոշոր կապիտալ ներդրումներ չէր պահանջում, իսկ դա Հայաստանի համար ուներ կարևոր նշանակություն, որովհետև բնակչության համեմատաբար բարձր խտության ու սակավահողության պայմաններում փրկության միակ ուղին արդյունաբերության այդ ճյուղերի արագ զարգացումն էր։ Հանրապետության բնական և սոցիալական առանձնահատկությունները հաշվի առնելով նէպի տարիներին արդյունաբերական զարգացման խոշոր թռիչք տեղի ունեցավ և դրվեցին սոցիալիստական ինդուստրացման հիմքերը։ Այդ բազայի վրա ձևավորվեց սովետական բանվոր դասակարգը, որն իր շուրջը համախմբելով բոլոր աշխատավորներին, գլխավորեց սոցիալիզմի կառուցման համար մղվող պայքարը։

Ղեկավարվելով մեր երկրում սոցիալիզմ կառուցելու մասին լենինյան ցուցումներով, կոմունիստական կուսակցությունը կարողացավ նէպի կենսագործմամբ երկիրը դուրս բերել տնտեսական հետամնացությունից և դնել նոր հասարակարգի կառուցման հիմքերը։ Ի դեպ, ազգային հանրապետությունների տեղական առանձնահատկությունները իրենց ավելի շատ զգացնել էին տալիս նէպի առաջին էտապում, ուժերի վերախմբավորման շրջանում, երբ ծայրամասերի տնտեսական ու կուլտուրական զարգացման մակարդակները խիստ տարբեր էին։ Սովետական իշխանության լենինյան ազգային քաղաքականության շնորհիվ, առաջին և երկրորդ հնգամյակների տարիներին տեղի ունեցավ ծայրամասերի զարգացման մակարդակների որոշակի համահարթեցում, որի շնորհիվ տեղական առանձնահատկությունները այլևս որոշիչ դեր չէին կարող խաղալ սոցիալիստական շինարարության ծավալման գործում։ Այժմ դրանք հաշվի էին առնվում միջոցառումների տնտեսական արդյունավետությունը բարձրացնելու, տեղական ռեսուրսներն ավելի լիովին օգտագործելու և այլ նկատառումներով։

Այսպիսով, սոցիալիստական շինարարության ընդհանուր օրինաչափությունների և նրանց դրսևորման տեղական առանձնահատկությունների դիալեկտիկան անցման շրջանի քաղաքականության հիմնական առանցքն էր կազմում։ Կենսագործելով նոր տնտեսական քաղաքականությունը, կուսակցությունը ելնում էր տեղական առանձնահատկությունները ճիշտ հաշվի առնելու և տեղական պայմաններին համապատասխան այն օգտագործելու անհրաժեշտությունից։

НЕКОТОРЫЕ ОСОБЕННОСТИ ОСУЩЕСТВЛЕНИЯ НЭП-а В АРМЕНИИ

Г. М. ГЕГАМЯН

Резюме

В Армении нэп был осуществлен в своеобразных социально-экономических условиях. Экономическая отсталость и разруха, малоземелье, острая нехватка в кадрах и средствах—все эти обстоятельства наклады-

вали свой отпечаток на проводимые мероприятия. Благодаря всестороннему учету местных особенностей и проведению нэп-а стало возможным восстановление сельского хозяйства и промышленности республики. Происшедшие социально-экономические изменения позволили перегруппировать силы и перейти в наступление по всему фронту против эксплуататоров деревни и города, заложить основы социализма.